Նյութական գործոններն ընդդեմ գաղափարների ուժի. ո՞ր գործոններն են Ռուսաստանը դարձնում Հայաստանի «լավագույն բարեկամ»

ԱՐԱՄ ԹԵՐԶՅԱՆ
Եվրասիական հետազոտությունների և վերլուծությունների ինստիտուտ, Միացյալ Նահանգներ
Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հայաստան

Պետությունների վարքագծի հիմքում գտնվող սոցիալական և նյութական գործոնների փոխազդեցության ուսումնասիրությունը կարող է հնարավորություն տալ բացահայտելու, թե ինչպես են պետությունները միմյանց հետ հաստատում բարեկամական հարաբերություններ: Եթե կոնստրուկտիվիզմի կողմնակիցներն ընդգծում են սոցիալական գործոնների կարևորությունը, ապա ռեալիստները մեծապես կարևորում են «նյութական գործոններն ընդդեմ գաղափարների ուժի» հայեցակարգը: Այդ առումով հատկանշական է Հայաստանի դեպքը՝ երկրի նորմատիվային ձգտումների և ռազմավարական ընտրությունների միջև եղած զգալի տարբերությունների պատճառով: Թեև Եվրոպական Միությունը (ԵՄ) ներկայացվում է որպես Հայաստանի քաղաքակրթական ընտրություն և «նորմատիվային» բարեկամ, Ռուսաստանը շարունակում է պահպանել Հայաստանի ռազմավարական բարեկամի իր առաջատար դիրքը: Հոդվածում ուսումնասիրվում է, թե ինչպես են Հայաստանի քաղաքական խոսույթում հայեցակարգված նորմատիվային և ռազմավարական բարեկամները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Ռուսաստանի՝ որպես անփոխարինելի բարեկամի, ընկալման քաղաքական ու տնտեսական հիմքերին: Եզրակացվել է, որ Հայաստանի նոր կառավարությունը մեծամասամբ հավատարիմ է նախկին իշխանությունների խոսույթին, որի հիմքում ընկած են բազմաթիվ գործոններ՝ սկսած Հայաստանի խնդրահարույց հարևաններից մինչև Ռուսաստանից հսկայական տնտեսական կախվածություն: Ի տարբերություն ներքաղաքական վայրիվերումների՝ արտաքին քաղաքականության իրականացման միջավայրը ենթակա է խիստ սահմանափակումների, որտեղ գրեթե բացառվում են հեղափոխական տեղաշարժերն ու քաղաքականության փոփոխությունները:

Բանալի բառեր
Հայ-ռուսական հարաբերություններ, ԵՄ, ռազմավարական և նորմատիվային բարեկամական հարաբերություններ, անհամաչափ գործընկերություն

Նախաբան

Քաղաքական խոսույթում պարբերաբար հանդիպում են «բարեկամական հարաբերությունների» և «հատուկ բարեկամական հարաբերությունների» մասին հիշատակումներ, իսկ «բարեկամը» հաճախ հանդիպող եզրույթ է միջազգային հարաբերությունների վերաբերյալ գրականության մեջ:

Հիմնվելով Արիստոտելի և Շմիդտի աշխարհընկալումների վրա՝ որոշ հեղինակներ առանձնացնում են միջազգային բարեկամական հարաբերությունների երկու ձև՝ ռազմավարական և նորմատիվային: Ռազմավարական բարեկամությունը, որը հաստատում են կողմերը՝ միմյանց ճանաչելով որպես բարեկամներ, հիմնված է անձնական ռացիոնալ շահերի վրա[1]: Այն ամբողջությամբ գործիքային, ֆունկցիոնալ և հաճախ անհամաչափ բարեկական հարաբերությունների ձև է: Նորմատիվային բարեկամական հարաբերությունները, որպես կանոն, հաստատվում են այն դերակատարների միջև, ովքեր ունեն ընդհանուր գաղափարական և զգայական սերտ կապեր, որոնք ապահովում են փոխադարձ նույնականացում և վստահություն: Եթե ռազմավարական բարեկամները մշտապես ակնկալում են, որ մյուս կողմը կդիմի խաբեության կամ կխախտի պայմանագրերը կամ համաձայնությունները և, այդպիսի հնարավոր զարգացումների դեպքում, մշակել են համապատասխան երաշխիքներ կամ այլընտրանքային տարբերակներ, ապա իրական նորմատիվային բարեկամական հարաբերությունները չեն պահանջում կառուցվածքային երաշխիքներ:[2]

Կոնստրուկտիվիզմի տեսության համաձայն, պետությունների վարքագիծն ուղղորդվում է ոչ միայն նյութական գործոններով,

---

[1] **Koschut S. and Oelsner A.,** (eds.), *Friendship and International Relations*, Springer, 2014, pp. 12-21.
[2] Նույն տեղում:

այլև սոցիալական ուժերով, և, հետևապես, այն ինքնության ու փոխազդեցությունների արդյունք է[3]: Ուստի, կարելի է եզրակացնել, որ միջազգային հարաբերություններում բարեկամական հարաբերությունների հիմնական շարժիչ ուժերն են գաղափարական գործոնները, ինչպիսիք են ինքնությունն ու համոզմունքները: Ըստ էության, թեև իրական բարեկամական հարաբերությունների հիմնական հատկանիշներն են դրա հուզական, այլասիրական չափումները, երկկողմ համագործակցությունը չի կարող լինել արդյունավետ առանց որևէ նյութական, պրագմատիկ և ռազմավարական հետաքրքրության[4]:

Հայաստանի դեպքը հատկանշական է մի քանի պատճառներով: Այն միակ եվրոպական երկիրն է, որը հարևան Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ենթարկվում է կրկնակի շրջափակման, ինչն ունեցել է զգալի բացասական հետևանքներ հարաբերությունների հաստատման համար: Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը ևս էականորեն ազդել է բարեկամների և դաշնակիցների մասին Հայաստանի ընկալումների վրա: Եթե Ադրբեջանը և Թուրքիան միաձայն ճանաչվել են որպես թշնամիներ, ապա վերջիններիս ռազմական գործողություններին դիմակայելու և Հայաստանի անվտանգությունը երաշխավորելու անհրաժեշտությունը հանգեցրել են Ռուսաստանի՝ որպես «նեղ օրվա ընկերոջ» և անփոխարինելի ռազմական դաշնակցի, ընկալմանը: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտում է նորմատիվային և ռազմավարական բարեկամական հարաբերությունների միջև եղած անհամապատասխանությունները: Եթե ԵՄ-ն մեծամասամբ դիտարկվում է որպես Հայաստանի քաղաքակրթական ընտրություն և «նորմատիվային» բարեկամ, ապա Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի թիվ մեկ ռազմավարական գործընկերը: Այլ կերպ

---

[3] **Wendt A**., Social Theory of International Politic, US, Cambridge University Press, 1999, pp. 95-96.

[4] **Schuette L**., Friendship and International Relations, 2015, https://www.e-ir.info/2015/05/29/friendship-and-international-relations/.

ասած, նյութական գործոնները վեր են գաղափարների ուժից: Հայ-ռուսական հարաբերություններին ակնհայտորեն բնորոշ է հսկայական անհամաչափություն, ինչը պայմանավորված է Հայաստանի քաղաքական և տնտեսական մեծ կախվածությամբ Ռուսաստանից: Կարելի է պնդել, որ Ռուսաստանի հետ խիստ անհամաչափ հարաբերությունների պայմաններում Հայաստանն ունի ընտրության և ձայնի փոքր հնարավորություն: Հոդվածում ուսումնասիրվում է, թե Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում ինչպես են հայեցակարգված նորմատիվային և ռազմավարական բարեկամները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Ռուսաստանի՝ որպես անփոխարինելի ընկերոջ, ընկալման քաղաքական ու տնտեսական հիմքերին:

Ուսումնասիրությունը հենվում է քաղաքական ելույթներում, թերթերում տպագրված հոդվածներում, պաշտոնական փաստաթղթերում և հարցազրույցներում ներկայացված դիտարկումների վրա, որոնք ընկած են խոսույթի հիմքում: Առանձնահատուկ ուսումնասիրվում են Հայաստանի նախագահների հիմնական քաղաքական ելույթները՝ կապված հետխորհրդային Հայաստանի բարեկամների և դաշնակիցների մասին պատկերացումների հետ:

Տ. Վան Լյովենը առաջարկում է մի քանի մեխանիզմներ, որոնք սոցիալական դերակատարները կարող են օգտագործել իրենց խոսույթում: Դրանց թվում են բացառումը, ներառումը, ճնշումը, թեմայնացումը, ակտիվացումը, պասիվացումը, անձնավորումը, ապաանձնավորումը, դետերմինիզմը և ինդետերմինիզմը, ասոցիացիան և հակաասոցիացիան, դիֆերենցացիան և ինդիֆերենցացիան, հարստացումը, ստվերումը, աբստրակցիան, ընդհանրացումը, առարկայացումը (subjection)[5]: Սոցիալական դերակատարներին լեզվի միջոցով ներկայացնելու Վան Լյովենի տեսությունը սահմանում է «սոցիալ-սեմանտիկ հաշվառում»՝ այդ դերակատարների ներկայացման ձևերի վերաբերյալ: Ներառումը և բացառումը այն հիմնական կատեգորիաներն են, որոնցից բխում են

[5] **Van Leeuwen T**., Discourse and practice: New tools for critical discourse analysis, US, Oxford University Press, 2008.

ենթակատեգորիաները[6]: Քաղաքական առաջնորդների ելույթներում այդ մեխանիզմների օգտագործումը ցույց է տալիս, որ «բարեկամի» մասին պատկերացումները ձևավորվում են «ներառում-բացառում» երկատման շրջանակներում:

Ռուսաստանի վերաբերյալ Հայաստանի քաղաքական գործիչների ելույթները ցույց են տալիս, որ նրանք, որպես կանոն, լայնորեն կիրառում են 1) ներառումը՝ ընդգծելով հայ-ռուսական գործընկերության քաղաքական և տնտեսական անփոխարինելիությունը, 2) ակտիվացումը՝ Ռուսաստանը պատմականորեն դիտարկելով որպես «փրկիչ», 3) ընդհանրացումը՝ «նախ՝ Ռուսաստանը» արտաքին քաղաքականության ընկալումը որպես անվիճելի փաստ:

«Նորմատիվային բարեկամ» հասկացությունը Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում

Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում «բարեկամական պետություն» հասկացությունը բավական տարածված է: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթի մանրակրկիտ վերլուծության արդյունքում առանձնացվել են հինգ գործընկերներ, որոնք ունեն «բարեկամի» կարգավիճակ: Տարածաշրջանային մակարդակում Վրաստանը և Իրանը դիտարկվում են որպես անփոխարինելի գործընկերներ: Մինչդեռ գլոբալ մակարդակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ գործընկերության ամրապնդմանը: Ռուսաստանն առանձնանում է որպես անվտանգության ոլորտի կենսական գործընկեր և քաղաքական ու տնտեսական ռազմավարական դաշնակից:

Ըստ էության, այն հարևան պետությունները, որոնց հետ պահպանվում են բնականոն հարաբերություններ, փոխգործակցության և փոխկախվածության բարձր մակարդակ, հաճախ բնորոշվում են որպես հին բարեկամներ: Ուստի, կարելի է

[6] **Van Leeuwen T**., նշվ. աշխ., էջ 23-53:

եզրակացնել, որ «բարեկամական պետություն» հասկացությունը կարելի է վերագրել ցանկացած պետության, որը չունի կոնֆլիկտային հարաբերություններ մյուս պետության հետ[7]:

Այդուհանդերձ, այդ բնորոշումը հաշվի չի առնում բարեկամական հարաբերությունների տարբեր ձևերը և, մասնավորապես, ռազմավարական և նորմատիվային «բարեկամական հարաբերությունների» միջև եղած զգալի տարբերությունները:

Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵՄ-ն, ընդհանուր առմամբ, դիտարկվում է որպես «նորմատիվային» բարեկամ, իսկ եվրոպական ինտեգրումը՝ որպես Հայաստանի քաղաքակրթական ընտրություն. «Հայաստանի ժողովուրդը կատարել է իր պատմական և անշրջելի ընտրությունը: Եվրոպային մերձենալու մեր ճանապարհը եղել է եզակի՝ բնական ճանապարհով...»[8]: «Հայաստանի ժառանգությունը, արժեքները, մշակույթը և ինքնությունը հայ ժողովրդին դարձնում են Եվրոպայի անբաժանելի մասը՝ կազմելով Հայաստանի եվրաինտեգրման քաղաքականության հիմնաքարը»[9]: ԵՄ-ն ինքը ձևավորվել է որպես նորմատիվային և լիբերալ դերակատար, որը տիրապետում է բավարար «փափուկ» գործիքների՝ Հարավային Կովկասի անհանգիստ տարածաշրջանում խաղաղության և ժողովրդավարության խթանմանը նպաստելու համար[10]:

Հայաստանի կուսակցությունների մեծ մասը, կառավարությունն ու խորհրդարանը կիսում են Սարգսյանի դիրքորոշումը, որ անհրաժեշտ է հավատարիմ մնալ Հայաստանի եվրոպական

---

[7] **Schuette L**, նշվ. աշխ.:

[8] **Serzh Sargsyan,** Statement by the President of the Republic of Armenia Serzh Sargsyan at the Parliamentary Assembly of the Council of Europe, 2011, http://www.president.am/en/statements-and-messages/item/2011/06/22/news-91/ (04.07.2015).

[9] **Serzh Sargsyan,** Speech by President Serzh Sargsyan at the Konrad Adenauer Foundation, 2012, http://www.president.am/en/statements-and-messages/item/2012/03/07/news-124/ (21.05.2015).

[10] **Terzyan A.,** The Evolution of the European Union's Conception in the Foreign Policy Discourse of Armenia: Implications for U-turn and the Path Beyond the Association Agreement', *Eastern Journal of European Studies*, 2016,**7**, 2, 153-171.

արտաքին քաղաքական ինքնությանը և եվրոպական ինտեգրման ուղուն: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում ԵՄ-ի եզակիությունն անքակտելիորեն կապված է եվրոպական արժեքներն իր հարևանության շրջանում տարածելու հանձնառության հետ, որի նպատակն է ստեղծել անվտանգ, բարգավաճող և կայուն գոտի:

«Խաղաղության խթանողի» գաղափարը սերտորեն կապված է նորմատիվային դերակատարների հետ: Հայաստանի քաղաքական խոսույթում առանձնահատուկ կարևորվում է ԵՄ-ի աճող ներգրավվածությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում: ԵՄ-ն՝ որպես հզոր դերակատար, կարող է վճռորոշ դեր խաղալ հայ-ադրբեջանական խնդրահարույց հարաբերությունների և, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը փակուղուց դուրս բերելու գործում[11]: Դա կլինի աստիճանաբար՝ ԵՄ-ի Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության նախաձեռնությունների հաջող իրականացման ճանապարհով:

Ըստ Սարգսյանի, ԵՄ-ն կարող է էապես նպաստել հակամարտությունների կարգավորմանը՝ խթանելով ժողովրդավարությունը և ստեղծելով ամուր հիմքեր միջպետական ժողովրդավարական երկխոսության համար, կազմակերպելով վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ՝ միջանձնային շփումների և համատեղ նախաձեռնությունների ճանապարհով, որոնք ուղղված կլինեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ընդլայնմանը, և, որ առավել կարևոր է, մեծացնելով եվրոպական ներգրավվածությունը Ադրբեջանում և ապահովելով, որ վերջինս հավատարիմ մնա «եվրոպական նորմերին»: Հետևաբար, «Եվրոպայի հետ մերձեցման քաղաքականությունը ոչ միայն ներքին բարեփոխումների, այլև արտաքին քաղաքականության օրակարգի առանցքն է: Հայաստանում և Հարավային Կովկասում ԵՄ-ի ներգրավվածությունը կարևորում ենք ոչ միայն

[11] **Terzyan A.,** The Evolution of the European…, նշվ. աշխ.:

այն պատճառով, որ ԵՄ-ն գլոբալ դերակատար է, այլև, առաջին հերթին, որ ժողովուրդների խաղաղ, անվտանգ և կայուն գոյակցության ամենահաջողված մոդելն է: Հարավային Կովկասի լիարժեք զարգացման մեր տեսլականը խարսխված է այն արժեքների և գիտակցության վրա, որոնք հնարավոր են դարձրել Եվրոպայի հաջողությունը»[12]:

Ուստի, ԵՄ-ն ընկալվում է որպես բարձրագույն և նորմատիվային դերակատար: Վերջինս իր հաջողված պատմության շնորհիվ ունի պատմական առաքելություն՝ «քաղաքակրթելու» իր դյուրաբեկ հարևաններին, որոնք ինքնաքայքայող միջպետական հակամարտությունների արդյունքում ենթարկվում են խիստ սահմանափակումների:

Հայաստանի իշխանությունները մեծապես կարևորում են Արևելյան գործընկերությունը՝ այն համարելով հավակնոտ և երկուստեք պարտավորեցնող նախաձեռնություն, որի նպատակն է Հարավային Կովկասում և դրանից դուրս ԵՄ հարևանության քաղաքականության նպատակները վերածել շոշափելի արդյունքների: Ասոցացման համաձայնագիրը դիտարկվում էր որպես ԵՄ-ի հետ խոր և համապարփակ գործընկերության երկար սպասված ճանապարհ[13]: Միաժամանակ, Հայաստանի կտրուկ քաղաքական շրջադարձը՝ Ասոցացման համաձայնագրից անցումը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), անհասկանալի էր հատկապես ԵՄ պաշտոնյաների շրջանում, ովքեր ցանկանում էին պարզաբանումներ ստանալ երկրի անսպասելի որոշման վերաբերյալ[14]:

Դա ցույց տվեց Հայաստանի նորմատիվային ձգտումների և աշխարհաքաղաքական խոչընդոտների միջև եղած զգալի անհամապատասխանությունը, որի արդյունքում Հայաստանը կայացրեց թվացյալ անսպասելի որոշում: Հայաստանի նորմատիվային

---

[12] **Serzh Sargsyan**, Speech ..., նշվ. աշխ.:

[13] **Terzyan A.,** The EU vs. Russia in the foreign policy discourse of Armenia: the fragility of normative power or the power of Russian coercion?. *Eastern Journal of European Studies*, 2017, 8, 2, 184-198.

[14] EU Wants Clarification from Armenia, Asbarez, 2013, http://asbarez.com/113548/eu-wants-clarification-from-armenia/ (10.04.2017).

ձգտումների և ռազմավարական առաջնայնությունների միջև առկա հիմնական տարբերություններն ակնհայտորեն դրսևորվում են նախագահ Սարգսյանի հետևյալ հաստատագրման մեջ. «Մեր որոշումը քաղաքակրթական չէ: Դա համապատասխանում է մեր ազգի տնտեսական շահերին: Մենք չենք կարող ստորագրել Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագիրը և երեք անգամ բարձրացնել գազի գինն ու էլեկտրաէներգիայի վճարը»[15]:

Հարց է առաջանում, թե որոնք են Հայաստանի ռազմավարական ընկերոջ հիմնական հատկանիշները և այն առանցքային գործոնները, որոնց արդյունքում Ռուսաստանը դիտարկվում է որպես անփոխարինելի դաշնակից:

Բարեկամական հարաբերությունների քաղաքական և անվտանգային չափումները. ռազմավարական ընկերոջ պատկերումը

Ի հակադրություն ԵՄ-ի, որը Հայաստանի քաղաքական խոսույթում մեծամասամբ ներկայացվում է որպես քաղաքակրթական ընտրություն, Ռուսաստանը որակվում է որպես անվտանգության ոլորտի ռազմավարական դաշնակից: Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակը, որն ուղեկցվում է Լեռնային Ղարաբաղի սառեցված հակամարտությամբ և թուրք-ադրբեջանական շրջափակմամբ պայմանավորված խիստ սահմանափակումներով, զգալիորեն նպաստել է Ռուսաստանի՝ որպես «նեղ օրվա ընկերոջ» ընկալմանը:

«Մենք ապրում ենք մի տարածաշրջանում, որը խարխափում է ատելության հետևողական սերմանման և պատերազմի հռետորության սարդոստայնում, և որտեղ կան բազում սպառնալիքներ ու վտանգներ: Որոշ երկրներ առանձին դեպքերում նույնիսկ կասկածի տակ են առնում հայերի՝ իրենց պատմական հողում ապրելու իրավունքը: Մեր տարածաշրջանում մեծ է զինված բախումների հավանականությունը»[16]: Այդ համա-

[15] **Terzyan A.,** The EU vs. Russia…, նշվ. աշխ.:
[16] **Serzh Sargsyan,** Statement by the President of Armenia, Chairman of the Republican Party of Armenia Serzh Sargsyan at the14th RPA Convention, 2012,

տեքստում է, որ հայ քաղաքական մտածողության մեջ Ռուսաստանն ընկալվում է որպես անվտանգության ոլորտի կարևորագույն դաշնակից:

Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են մի քանի հասկացություններ, որոնց վրա 2008 թվականից խարսխված են Ռուսաստանի մասին պատկերացումները: Դրանք են՝ անվտանգության առանցքային գործընկեր[17], ռազմավարական դաշնակից[18], խոշոր գերտերություն, «որի լայն տարածաշրջանային ներգրավվածությունից Հայաստանը մեծապես կշահի »[19]:

Կարելի է պնդել, որ Ռուսաստանի՝ որպես ռազմավարական դաշնակցի, նկատմամբ վերաբերմունքը ոչ թե մանիպուլյացիայի արդյունք է, այլ արմատացած է Հայաստանի քաղաքական մտածողության և հասարակական գիտակցության մեջ: Հատկանշական է, որ Հայաստանի առաջին հանրապետության փլուզումից և 1921թ. երկրի խորհրդայնացումից անմիջապես հետո, կառավարության նշանավոր ներկայացուցիչներից մեկը ՝ Հովհաննես Քաջազնունին, նշել է. «Մեր պետականության առաջին իսկ օրվանից մենք քաջ գիտակցում էինք, որ այնպիսի փոքր, աղքատ և մեկուսացված երկիր, ինչպիսին է Հայաստանը, չի կարող դառնալ իսկապես անկախ և ինքնավար… Մենք պետք է երախտապարտ լինենք

http://www.president.am/en/press-release/item/2012/12/15/Address-by-Serzh-Sargsyan-at-the-14th-Republican-Convention/ (13.12.2017).

[17] **Serzh Sargsyan,** Statement by President Serzh Sargsyan at the Extended Meeting Held at the RA Ministry of Defense, 2013, http://www.president.am/en/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/ (14.05.2017).

[18] MFA of Armenia, Bilateral Relations: Russia, http://www.mfa.am/en/country-by-country/ru (20.06.2017).

[19] **Serzh Sargsyan,** Statement of President Serzh Sargsyan for the Mass Media on the Results of the Meeting with the President of the Russian Federation Vladimir Putin, 2016, http://www.president.am/en/statements-and-messages/item/2016/08/10/President-Serzh-Sargsyan-statement-in-Russia-10-08/ (13.04.2017).

բոլշևիկներին: Հեղաշրջում կատարելով՝ նրանք, եթե ոչ փրկեցին մեզ, ապա առնվազն դրեցին ճիշտ ուղու վրա…»[20]:

Այդուհանդերձ, 1991թ. անկախացումից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ռուսաստանի մասին պատկերացումները զգալի փոփոխությունների են ենթարկվել և նախորդել են անկախության համահայկական շարժմանը: Հայաստանի ռազմավարական մտածողության մեջ Ռուսաստանի՝ որպես Հայաստանի անփոխարինելի «փրկչի», արմատացած պատկերացումը կասկածի տակ առնվեց Խորհրդային Միության աստիճանական փլուզման ֆոնին: Հայաստանի «մեծ եղբայր» Ռուսաստանը հանկարծ վերածվեց թշնամու, որը ծայրահեղ կերպով խոչընդոտում էր Հայաստանի պետականության անկախ, ազատ և ժողովրդավարական զարգացմանը[21]: Դա տեղի էր ունենում աստիճանաբար և հատկապես սրվեց Լեռնային Ղարաբաղի շարժման հետագա փուլերում[22]: Ազգային շարժման առաջնորդներից մեկը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ռուսաստանին դարեր շարունակ ապավինելը համարում էր մոլորություն և ինքնակործանման ճանապարհ: Ուստի, 1990-ական թվականներին նա մեծապես կարևորում էր ազգային շահերի պաշտպանությունը և կտրականապես դեմ էր ցանկացած ոտնձգության՝ ռուսականացմանն ուղղված շովինիստական քաղաքականության շրջանակներում[23]:

Բացահայտ հակառուսական քարոզչությունը սկսեց նվազել անկախ պետականության վերականգնումից անմիջապես հետո: Ադրբեջանական և թուրքական կողմի սպառնալիքները պատճառ

---

[20] **Mirzoyan A**., Armenia, the regional powers, and the West: between history and geopolitics, Springer, 2010, pp. 23-24.

[21] **Mirzoyan A**., նշվ. աշխ., էջ 25-28:

[22] **Terzyan A**., The Evolution of Armenia's Foreign Policy Identity: The Conception of Identity Driven Paths. Friends and Foes in Armenian Foreign Policy Discourse. *Values and Identity As Sources of Foreign Policy in Armenia and Georgia*, ed. Kornely Kakachia and Alexander Markarov, "UNIVERSAL", 2016, pp. 145-146.

[23] **Տեր-Պետրոսյան Լ.,** Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցարույցներ: Երևան, 2006թ., էջ 34:

դարձան, որ Հայաստանի ղեկավարությանը վերանայի իր նախնական հակառուսական վերաբերմունքը: Տեր-Պետրոսյանը սկսեց պաշտպանել հայ-ռուսական կապերի ամրապնդման գաղափարը՝ հիմք ընդունելով երկու երկրների նախապատմությունը: «Խորհրդային Միության կազմալուծումը չի թուլացնում այն միասնությունը, որը ձևավորվել է հարյուրամյակների ընթացքում որպես համագոյակցության միջոց… գաղտնիք չէ, որ երկար ժամանակ ռուսական մշակույթը բոլոր ազգերի համար համաշխարհային քաղաքակրթությունների հետ շփվելու միակ միջոցն էր Ռուսաստանի կայսրության և Խորհրդային Միության սահմաններում»[24]:

Հայաստանի զարգացման ամենամեծ «խոչընդոտը» վերածվել է «մոդելային» գործընկերոջ, որն ունի կարևոր դերակատարություն Հարավային Կովկասի տարածաշրջանի կայունության ամրապնդման գործում: Ռուսաստանի մասին խճճված և երկիմաստ ընկալումները հանգեցնում են հետևյալ եզրակացության. սկզբնական փուլում այն հիմնականում ընկալվել է որպես անվտանգության ոլորտի գործընկեր, որի դերն անփոխարինելի է Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի երկակի շրջափակման պայմաններում: Ուստի, Հայաստանի հակումը դեպի Ռուսաստան պայմանավորված է եղել ոչ թե ինքնության հետ կապված գործոններով, այլ տարածաշրջանային մակարդակի խոչընդոտներով ու մարտահրավերներով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի և Թուրքիայի շուրջ ստեղծված թշնամու կերպարը առանցքային նշանակություն է ունեցել Հայաստանի քաղաքական մտածողության մեջ՝ Ռուսաստանի մասին պատկերացումների վերանայման գործում: Ըստ էության, Ռուսաստանի հետ դաշինքը և դաշնակցային հավատարմությունը դիտարկվել են որպես առանցքային գործիք՝ երկրի առջև ծառացած ավանդական ռազմական սպառնալիքներին դիմակայելու գործում:

Այլ կերպ ասած, Հայաստանի քաղաքական վերնախավը և հասարակությունը Ռուսաստանը կարևորում են որպես «կոշտ

[24] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 401:

դերակատար››, որը կարող է փոքր և խոցելի Հայաստանին օգնել հակազդելու Ադրբեջանին և Թուրքիային:

Հավատարիմ մնալով այդ հռետորաբանությանը՝ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1998-2008 թվականներին իր նախագահության շրջանում մեծապես կարևորում էր Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցությունը՝ մեծամասամբ անվտանգության և ռազմական ուժի հզորացման նկատառումներով: «Ռուսաստանը հետխորհրդային տարածքի ամենահզոր պետությունն է տնտեսական և ռազմական առումով: Ռուսաստանը մեր առանցքային գործընկերն է…»[25]: Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում անվտանգությանն առնչվող հարցերն ուղղակիորեն կապված են ‹‹նախ՝ Ռուսաստանը›› մոտեցման հետ: Անվտանգության ոլորտի բոլոր այլ եվրոպական և եվրաատլանտյան դերակատարները, անկախ նրանից ԵՄ-ն, թե ՆԱՏՕ-ն, հաջորդում են Ռուսաստանին և վերջինիս գլխավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

2007թ. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում էր, որ ‹‹Ռուսաստանի կարևորությունը Հայաստանի անվտանգության համար, երկու ժողովուրդների միջև ավանդական բարեկամական կապերը, առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակը, Ռուսաստանի դերը Լեռնային Ղարաբաղի միջնորդական ջանքերում, ինչպես նաև զգալի հայ համայնքի առկայությունը Ռուսաստանում նպաստում են երկկողմ ռազմավարական գործընկերությանը››[26]: Ռ. Քոչարյանի խոսույթում ռազմավարական գործընկերության հասկացության առնչությամբ ինքնության կամ մշակույթի հետ կապված հղումները շատ չեն: Խոսույթը հիմնականում կենտրոնացած է տնտեսական, քաղաքական և ռազմական ընդհանուր շահերի վրա:

Հայաստանի երրորդ նախագահ Ս. Սարգսյանը նույնպես երբեք կասկածի տակ չի առել հայ-ռուսական ռազմավարական

---

[25] **Քոչարյան Ռ.,** Ելույթներ և հարցազրույցներ, Երևան, 2011թ., էջ 272.

[26] Republic of Armenia National Security Strategy, 2007, http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrineeng.pdf (07.08.2015).

գործընկերության կենսական նշանակությունը՝ այն համարելով առանցքային ազգային անվտանգության ամրապնդման համար: Սարգսյանը Ռուսաստանը բնորոշել է որպես «անվտանգության հարցերում հիմնական տարածաշրջանային դերակատար»[27]:

Թեև ինքնության հետ կապված հղումներ չկան հայ-ռուսական գործընկերության առնչությամբ, այն դիտարկվում է որպես առավել կարևոր և անփոխարինելի գործոն Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության և կայունության պահպանման համար: «Հայաստանի Հանրապետության անվտանգության առանցքը շարունակելու է մնալ հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային գործընկերությունը, որն անկախության 20-ամյա պատմության ընթացքում ապացուցել է իր կենսունակությունը: Այս համատեքստում մենք չափազանց կարևոր դեր ենք հատկացնում մեր անդամակցությանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը»[28]:

Ըստ էության, «նախ՝ Ռուսասատանը» մոտեցումը ստվերել է Հայաստանի եվրոպական ինքնությունը և եվրաինտեգրման նկրտումները: Հայ-ռուսական ռազմական դաշինքի խիստ ընդգծվածության արդյունքում Հայաստանի կուսակցությունները չէին կարող հակադրվել երկրի անդամակցությանը Եվրասիական տնտեսական միությանը: Փոխարենը, նրանք պաշտպանել են այդ որոշումը՝ պնդելով, որ երկրի առջև ծառացած սուր տարածաշրջանային մարտահրավերները դրդում են զարգացնել Հայաստանի ռազմավարական գործընկերությունն իր անփոխարինելի ռազմական դաշնակից Ռուսաստանի հետ բոլոր հնարավոր ոլորտներում[29]: Զարմանալի չէ, որ Ս. Սարգսյանը, ինչպես բարձրաստիճան

[27] **Serzh Sargsyan:** Russia is a core player in our region, Armenpress, 2011, https://armenpress.am/eng/news/652530/serzh-sargsyan-russia-is-a-core-player-in-our-region.html (20.09.2017).

[28] **Serzh Sargsyan,** Statement by President Serzh Sargsyan at the extended meeting held at the RA Ministry of Defense, 2013, http://www.president.am/en/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/ (19.12.2017).

[29] Ruling Party Says Customs Union Decision Meets Armenia's National Interests, Armenianow, 2013,

այլ պաշտոնյաներ, հիմնավորել է Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին՝ հիմնականում անվտանգության խնդիրների համատեքստում: Հայ-ռուսական ռազմական գործընկերությունը և այն փաստը, որ ռուսական զորքերը տեղակայված են հայ-թուրքական սահմանին, Հայաստանին տալիս է անվտանգության զգացողություն իր խնդրահարույց հարևանության պայմաններում:

Հատկանշական է, որ Հայաստանի շրջադարձից կարճ ժամանակ առաջ Ռուսաստանը որոշել էր ակտիվացնել ռազմական համագործակցությունը Հայաստանի թշնամի Ադրբեջանի հետ՝ վերջինիս վաճառելով 4 միլիարդ դոլար արժողությամբ ռուսական ռազմական տեխնիկա[30]: Ռուս-ադրբեջանական ռազմական համագործակցության ակտիվացումն անհանգստություն առաջացրեց Հայաստանում և, ըստ տարատեսակ աղբյուրների, ազդեց ԵՏՄ-ին անդամակցելու որոշման վրա:

Այդուհանդերձ, 2016թ. ապրիլին ադրբեջանա-ղարաբաղյան բաժանարար գծի երկայնքով ադրբեջանական հարձակման արդյունքում ծանր մարտական գործողություններից հետո նախագահ Սարգսյանն իր դժգոհությունն արտահայտեց Ադրբեջանին ռուսական ռազմական տեխնիկայի մատակարարման կապակցությամբ և անուղղակիորեն կասկածի տակ առավ հայ-ռուսական դաշինքի խորությունը: Նախագահը մասնավորապես նշում էր, որ «Ռուսաստանը երբեք չի խաղացել Հայաստանի համար այն դերը, որը Թուրքիան խաղում է Ադրբեջանի համար»[31]:

Ավելին, իր հետագա հայտարարություններում Սարգսյանը զգալիորեն կոշտացրեց ռազմական դաշնակցի նկատմամբ

---

http://www.armenianow.com/news/48249/armenia_ruling_party_customs_union_russia, (07.02.2016).

[30] In Baku, Putin Brings Gunboats Along With Diplomacy, Eurasianet, 2013, http://www.eurasianet.org/node/67392, (13.11.2015).

[31] Armenian President: “Russia is our ally, not patron,” Mediamax, 2016, http://www.mediamax.am/en/news/karabakh/17631/?fb_comment_id=1079724282091415_1079933415403835 (10.04.2017).

դիրքորոշումը՝ պնդելով, որ Լեռնային Ղարաբաղում ռուսական զորքերը չեն կարող ունենալ խաղաղապահ դերակատարություն[32]:

Հատկանշական է, որ 2016թ. ապրիլի 6-ին Բեռլինում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ Ս. Սարգսյանը բացահայտորեն խոսեց Ռուսաստանի պատճառած մեծ ցավի և Մոսկվայի ճնշումների նկատմամբ Հայաստանի խոցելիության մասին: «Ռուսաստանը մեր ռազմավա-րական դաշնակիցն է, և մենք գտնվում ենք անվտանգության նույն համակարգում՝ ՀԱՊԿ-ում, և բնական է, որ մենք ցավ ենք զգում, երբ Ռուսաստանը զենք է վաճառում Ադրբեջանին: Բայց Դուք շատ լավ հասկանում եք, որ մեր հնարավորությունները սահմանափակ են՝ ազդելու այդ գործընթացի վրա»[33]:

Ակնհայտ է, որ Ս. Սարգսյանի «վերանայած» դիրքորոշումը ցույց տվեց Հայաստանի հիասթափությունը Ռուսաստանի հարկա-դրական քաղաքականությունից: Իր ռազմավարական ընկերոջն օգնելու փոխարեն՝ Մոսկվան յուղ լցրեց կրակի վրա՝ Ադրբեջանին զինելով մեծ քանակությամբ զենք ու զինամթերքով: Այդուհանդերձ, Ս. Սարգսյանի քննադատական դիրքորոշումը չհանգեցրեց էական փոփոխությունների ո՛չ Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում, ո՛չ հայ-ռուսական հարաբերություններում: Ավելին, նախկին նախագահն արտահայտեց իր աջակցությունը Ռուսաս-տանի արտաքին քաղաքականության Արևմուտքի համար առավել վիճելի և երկիմաստ հարցերի լուծմանը՝ ուկրաինական ճգնաժա-մից մինչև Սիրիա և այլն: «Մենք բարձր ենք գնահատում Ռուսաս-տանի դերը աշխարհում և, մասնավորապես, մեր տարածա-շրջանում, որտեղ զուգահեռ ընթանում են կայունության և անվտանգության վրա ազդող բազմաթիվ գործընթացներ: Հայաս-

[32] Bloomberg.com, https://www.bloomberg.com/news/articles/2016-04-24/caucasus-war-may-resume-at-any-moment-armenian-president-says (03.04.2017).

[33] **Serzh Sargsyan,** President Serzh Sargsyan's remarks at the joint press conference with the German Chancellor Angela Merkel, 2016, http://www.president.am/en/press-release/item/2016/04/06/President-Serzh-Sargsyan-meeting-with-German-Chancellor-Angela-Merkel/ (09.04.2017).

տանում ուշադիր հետևում են Ռուսաստանի Նախագահի ինտենսիվ արտաքին քաղաքական շփումներին… Ես համոզված եմ, որ Հայաստանը միայն շահում է մեր տարածաշրջանում Ռուսաստանի դերի ակտիվացումից»[34]:

Ռուսաստանի՝ որպես Հայաստանի անփոխարինելի ռազմական դաշնակցի, ընկալումը տարածաշրջանի ռազմական գործողությունների ֆոնին, ինչպես նաև հիպոթետիկ ապագայի վերոնշյալ սցենարները պատճառ դարձան, որ Հայաստանի քաղաքական առաջնորդները ռուսական ուղին դիտարկեն որպես ողջամիտ և անխուսափելի որոշում: Այլ կերպ ասած, Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ռուսաստանը ներկայացվում է որպես անվտանգության ոլորտի առնացքային գործընկեր, դաշնակից և նույնիսկ տարածաշրջանում անվտանգություն ապահովող առանցքային դերակատար: Միաժամանակ, անհնար է թերագնահատել Ռուսաստանի հսկայական տնտեսական ազդեցությունը Հայաստանում և այդ ազդեցության օգտագործումը որպես քաղաքական գործիք՝ երկրի վարքագծի վրա ազդելու համար:

Հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների անհամաչափությունը. հայացք նյութական գործոններին

Պարզելու համար, թե ինչպիսի առանցքային գործոններ ու հանգամանքներ են նպաստել հայ քաղաքական մտածողության մեջ Ռուսաստանի՝ որպես անփոխարինելի դաշնակցի, ընկալմանը, հարկ է մանրակրկիտ ուսումնասիրել երկկողմ հարաբերությունների տնտեսական միջավայրը: Ռուսաստանի իշխանությունների արտաքին քաղաքական մտածողության մեջ արձանագրված փոփոխությունը՝ անցումը «ազատական գաղափարներից» աշխարհաքաղաքական և, մասնավորապես, պրագմատիկ աշխարհա-

[34] **Serzh Sargsyan,** Statement of President Serzh Sargsyan for the Mass Media on the Results of the Meeting with the President of the Russian Federation Vladimir Putin, 2016, http://www.president.am/en/statements-and-messages/item/2016/08/10/President-Serzh-Sargsyan-statement-in-Russia-10-08/ (13.04.2017).

տնտեսական ռեալիզմին, Պուտինի նախագահության սկզբնական շրջանում[35] զգալիորեն ուրվագծեց քաղաքականության առաջնահերթությունները ԱՊՀ նորանկախ պետությունների նկատմամբ: Ռուսաստանի հզորությունը վերականգնելու ցանկությունը և, մասնավորապես, իր «ազդեցության ավանդական ոլորտում» վերահսկողության վերահաստատումը պատճառ դարձան, որ նախագահ Պուտինը վերանայի և առաջ մղի, այսպես կոչված, «ԱՊՀ նախագիծը»: Դրա հիմքում էր Ռուսաստանի ազդեցության մեծացումն այդ երկրներում, որի նպատակն էր կանխել «անցանկալի ներխուժումները» և ճնշել ԱՊՀ երկրների արևմտամետ արտաքին քաղաքական նկրտումները[36]: Այդ նպատակով Ռուսաստանի իշխանություններն ընդգծում էին ռուսական կապիտալի ընդլայնման, քաղաքական առաջնորդների հետ կապերի ամրապնդման, ինչպես նաև ԱՊՀ երկրներում ռազմական ներկայության պահպանման ու ամրապնդման անհրաժեշտությունը: Ռուսաստանը ձեռնամուխ եղավ ԱՊՀ երկրներում ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսական և էներգետիկ ենթակառուցվածքների յուրացմանն ու մոնոպոլիզացմանը՝ որպես այդ երկրների վարքագծի վրա ազդելու հզոր գործիք[37]: Նորացված «ԱՊՀ նախագիծը» առանձնահատուկ լավ աշխատեց Հայաստանում, որտեղ, ի տարբերություն հարևան Վրաստանի, հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում արձանագրվեցին շոշափելի արդյունքներ: Մասնավորապես, Հայաստանի և Ռուսաստանի նախագահները հանդես եկան «ակտիվներ՝ պարտքի դիմաց» բանաձևով, որն աստիճանաբար, սակայն զգալիորեն պետք է մեծացներ ռուսական ազդեցությունը Հայաստանի տնտեսության

[35] **Thorun C**., Explaining change in Russian foreign policy: the role of ideas in post-Soviet Russia's conduct towards the West, Springer, 2008, p. 28.
[36] **Skak M.,** Russia’s New “Monroe Doctrine,” In Russian foreign policy in the 21st century, Palgrave Macmillan, pp. 138-154.
[37] **Secrieru S**., Russia's Foreign Policy under Putin: CIS Project. UNISCI Discussion Papers, 10, 2006, http://www.redalyc.org/pdf/767/76701018.pdf.

վրա 2001թ. աշնանից[38]: Բանաձևը շատ պարզ էր. 1991 թվականից կուտակված իր 100 միլիոն դոլար պարտքի մարման դիմաց Հայաստանը համաձայնեց Ռուսաստանին փոխանցել ռազմավարական նշանակության պետական ակտիվներ, այդ թվում՝ վեց հիդրոէլեկտրակայան[39]: Ավելին, 2003թ. Հայաստանը վավերացրեց համաձայնագիր, որը թույլ տվեց ռուսական «ՌԱՕ» միավորված էներգետիկ համակարգերին ստանձնել Մեծամորի ատոմակայանի ֆինանսական վերահսկողությունը, որը կազմում է Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 40 տոկոսը[40]: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանն իր ձեռքն առավ Հայաստանի էներգետիկ կարողությունների շուրջ 90 տոկոսը: Բացի այդ, «ակտիվներ՝ պարտքի դիմաց» փոխանակման ծրագրի համաձայն, Հայաստանի խոշորագույն ցեմենտի գործարանը հանձնվեց ռուսաստանյան «ԻՏԵՐԱ» գազ արտահանող ընկերությանը՝ գազամատակարարման համար կուտակված 10 միլիոն դոլարի պարտքի մարման դիմաց[41]:

Հայաստանում տնտեսական վերահսկողության մեծացումը Ռուսաստանին տվեց քաղաքական լծակներ՝ երկրի վարքագծի վրա ազդելու համար: 2002թ. հոկտեմբերին Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը ստորագրեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) հիմնադիր փաստաթղթերը՝ այդպիսով հաստատելով վերջիններիս ռազմավարական ընտրությունը Ռուսաստանի օգտին: 2003թ. աշնանը հայ-ռուսական ռազմական համագործակցությունը զգալիորեն ուժեղացավ: Վրացական «Վարդերի» հեղափոխության նախօրեին Հայաստանը ստորագրեց մի շարք

---

[38] Yerevan Moscow Debt Pact Extends Russia's Caucasus Influence, Eurasianet, 2002, http://www.eurasianet.org/departments/business/articles/eav073002.shtml (19.12.2018).

[39] Russia Tightens Grip on Armenia With Debt Agreements, Eurasianet, 2003, http://www.eurasianet.org/departments/business/articles/eav050703.shtml (19.12.2018).

[40] Russian Parliament Ratifies Debt Deal With Armenia, Azatutyun, 2003, https://www.azatutyun.am/a/1571472.html (19.12.2018).

[41] Russia Tightens Grip on Armenia, նշվ. աշխ.:

ռազմական պայմանագրեր Ռուսաստանի հետ[42]: Ժամանակի ընթացքում Ռուսաստանը զգալիորեն ընդլայնել է իր տնտեսական ազդեցությունը Հայաստանում: Արտաքին առևտրի ոլորտում Հայաստանի հիմնական գործընկերը Ռուսաստանն է, որը Հայաստանի արտահանումների ընդհանուր ծավալի 20 տոկոսի նպատակակետն է և դրամական փոխանցումների 70 տոկոսի աղբյուրը[43]: Ռուսաստանը նաև պահպանում է առաջատարի իր դիրքը Հայաստանում՝ օտարերկրյա ներդրումների ծավալով: Պաշտոնական տեղեկատվության համաձայն, գոյություն ունեն ռուսական կապիտալ ունեցող շուրջ 1400 ձեռնարկություն, ինչը գերազանցում է բոլոր տնտեսվարող սուբյեկտների մեկ չորրորդը՝ արտաքին կապիտալի ներգրավմամբ[44]: Բացի այդ, Ռուսաստանում ապրում են ավելի քան 2,5 միլիոն հայ ներգաղթյալներ, որոնք շատ զգայուն են հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ: Զարմանալի չէ, որ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը ջերմորեն ողջունել է ԵՏՄ-ին անդամակցելու Հայաստանի որոշումը՝ ընդգծելով դրա դրական հետևանքները և Ռուսաստանի հայ համայնքի համար անցանկալի հետևանքներից խուսափելու հնարավորությունը[45]: Հատկանշական է, որ նախքան ԵՏՄ-ի ուղղությամբ Հայաստանի շրջադարձը, 2013թ. ապրիլին Ռուսաստանը 50 տոկոսով ավելացրեց գազի գինը Հայաստանում՝ ահազանգելով եվրոպական ուղղությամբ շարժվելու դեպքում Հայաստանում հնարավոր տնտեսական հետևանքների մասին: Հատկանշական է, որ գազի գինը նվազեց միայն այն ժամանակ, երբ Հայաստանը

[42] **Secrieru S**., նշվ. աշխ.:

[43] Armenia Monthly Economic Update, World Bank Group 2015, Worldbank, 2015, http://www.worldbank.org/content/dam/Worldbank/document/eca/armenia/armeniaeconomic-update.pdf (18.12.2018).

[44] Presidents of Armenia and Russia recapped the results of negotiations, 2017, http://www.president.am/en/press-release/item/2017/03/15/President-Serzh-Sargsyan-met-with-representatives-of-Mass-Media-with-Vladimir-Putin/ (20.09.2017).

[45] The President of the Union of Armenians in Russia welcomes the decision to join the Customs Union, Panorama, 2013, https://life.panorama.am/hy/news/2013/10/10/araabrahamyan-mm/15384 (19.12.2018).

որոշեց անդամակցել ԵՏՄ-ին: Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը բացահայտ հայտարարեց, որ Եվրասիական ընտրությունը Հայաստանին ապահովագրում է գազի գնի բարձրացումից[46]:

Նախագահ Ս. Սարգսյանի խոսույթում ընդգծվում են տնտեսական և քաղաքական այն հիպոթետիկ բարդությունները, որոնց կարող է բախվել Հայաստանը՝ Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունից շեղվելու դեպքում: Լեգիտիմացնելով ԵՏՄ-ին անդամակցելու Հայաստանի որոշումը՝ Ս. Սարգսյանը կիրառեց «հիպոթետիկ ապագայի» ռազմավարությունը: Հաշվի առնելով Հայաստանի հսկայական տնտեսական և էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, նա նշել է, որ ԵՏՄ-ի օգտին ընտրությունը Հայաստանը կպաշտպանի անցանկալի անակնկալներից ու տնտեսական հետևանքներից[47]: Ռուսաստանը տիրապետում է տնտեսական և քաղաքական գործիքների՝ Հայաստանում իր ազդեցության հետագա ամրապնդման և վերջինիս քաղաքական դիրքորոշումների վրա ազդելու համար: Քաջ գիտակցելով ստեղծված իրավիճակը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կվարանի կասկածի տակ առնել «նախ՝ Ռուսաստանը» մոտեցումը: Փոխարենը, Փաշինյանը նշել է տնտեսական և քաղաքական հարաբերությունները սերտացնելու անհրաժեշտության մասին: Հայաստանի վարչապետը Ռուսաստանի նախագահի հետ առաջին հանդիպման ժամանակ հայտարարել է. «Մենք քննարկելու հարցեր ունենք, բայց կան նաև այնպիսիք, որոնց քննարկման կարիքը չկա: Դա Հայաստանի և Ռուսաստանի միջև դաշնակցային ռազմավարական կապն է ... Ես կարող եմ ձեզ հավաստիացնել, որ Հայաստանում կա կոնսենսուս, և որևէ մեկը մինչ օրս կասկածի տակ չի առել հայ-ռուսական հարաբերությունների ռազմավարական

[46] Gas Price Reduced as Armenia Joins Customs Union, Asbarez, 2013, http://asbarez.com/114797/gas-price-reduced-as-armenia-joins-customs-union/ (19.12.2018).

[47] **Terzyan A**., The anatomy of Russia's grip on Armenia: bound to persist?. *CES Working Papers*, 2018, **10**, 2, 237-238.

բնույթի կարևորությունը[48]: Հատկանշական է, որ Հայաստանի իշխանությունների՝ Ռուսաստանի որպես «լավագույն ընկերոջ», նկատմամբ վերաբերմունքը մեծապես համընկնում է հասարակական կարծիքի հետ: Ըստ հարցումների, հայ հասարակության զգալի մեծամասնության գիտակցության մեջ Ռուսաստանը ընկալվում է որպես «նեղ օրվա ընկեր» և անվտանգության ոլորտի առանցքային դաշնակից: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան և Վրաստանը[49]:

Ուստի, հաշվի առնելով հայ-ռուսական անհամաչափ հարաբերությունների տնտեսական և քաղաքական խորությունը, Հայաստանում իշխանափոխությունը հազիվ թե հանգեցնի երկրի ռազմավարական դաշնակցի վերաբերյալ նախկին խոսույթի էական փոփոխությունների: Հետևաբար, նախկին խոսույթը, որը ձևավորվել է մի շարք հանգամանքների արդյունքում՝ սկսած Հայաստանի խնդրահարույց հարևաններից մինչև Ռուսաստանից հսկայական տնտեսական կախվածություն, պահպանվելու է: Դա ցույց է տալիս, որ, ի տարբերություն ներքաղաքական վայրիվերումների, արտաքին քաղաքականության միջավայրը ենթակա է մի շարք խիստ սահմանափակումների, որտեղ գրեթե բացառվում են հեղափոխական տեղաշարժերն ու քաղաքականության փոփոխությունները:

Եզրակացություն

Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում ‹‹բարեկամական հարաբերությունների›› և ‹‹բարեկամների›› վերաբերյալ հասկացությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար ռազմավարական ընկերոջ և դաշնակցի ընտրության հարցում

[48] New Armenian PM tells Putin he wants closer ties with Russia, Reuters, 2018, https://www.reuters.com/article/us-russia-armenia-putin-pashinyan/new-armenian-pm-tellsputin-he-wants-closer-ties-with-russia-idUSKCN1IF1A3.

[49] **Galstyan N**., How to Deal with Armenia's Geopolitical Trilemma? Examining Public Opinion. In: P. Bajor and K. Schöll-Mazurek, ed. *Eastern Chessboard. Geopolitical Determinants and Challenges in Eastern Europe and the South Caucasus,* Kraków: Ksiegarnia Akademicka, 2015, pp. 212-213.

վճռորոշ են եղել ոչ թե գաղափարական, այլ սոցիալական գործոնները: Թեև ԵՄ-ն մեծապես դիտվում է որպես Հայաստանի ռազմավարական ընտրություն և ‹‹նորմատիվային›› ընկեր, երկիրը ստիպված էր շրջադարձ կատարել իր ռազմավարական ընկեր Ռուսաստանի ուղղությամբ: Այլ կերպ ասած, նյութական գործոնները վեր են գաղափարների ուժից: Հայաստանի դեպքը ցույց է տալիս, որ թեև իրական բարեկամական հարաբերությունների հիմնական հատկանիշներն են դրա զգայական-ալտրուիստական չափումները, առանց նյութական-ուտիլիտար և ռազմավարական շահերի երկկողմ գործընկերությունը չի կարող լինել արդյունավետ: Հետևաբար, Հայաստանի տնտեսական և քաղաքական հսկայական կախվածությունը Ռուսաստանից, ինչպես նաև ռազմավարական անվտանգության դաշինքը հանգեցրել են հայ քաղաքական մտածողության և հասարակական գիտակցության մեջ Ռուսաստանի՝ որպես «լավագույն ընկերոջ» ընկալմանը:

Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունն էականորեն ազդել է բարեկամների և դաշնակիցների մասին Հայաստանի ընկալումների վրա: Եթե Ադրբեջանն ու Թուրքիան միաձայն բնորոշվում են որպես թշնամիներ, ապա վերջիններիս ռազմական գործողություններին դիմակայելու և Հայաստանի անվտանգությունը երաշխավորելու անհրաժեշտությունը հանգեցրել են Ռուսաստանի՝ որպես «նեղ օրվա ընկերոջ» և անփոխարինելի անվտանգության դաշնակցի, ընկալմանը: Ավելին, հաշվի առնելով հայ-ռուսական անհամաչափ հարաբերությունների տնտեսական և քաղաքական խորությունը, Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը քիչ հավանական է, որ կհանգեցնի երկրի ռազմավարական դաշնակցի վերաբերյալ նախկին խոսույթի որևէ էական փոփոխության: Հետևաբար, նախկին խոսույթը, որը ձևավորվել է մի շարք հանգամանքների արդյունքում՝ սկսած Հայաստանի խնդրահարույց հարևանությունից մինչև Ռուսաստանից հսկայական տնտեսական կախվածություն, պահպանվելու է: Դա ցույց է տալիս, որ ի տարբերություն ներքաղաքական վայրիվերումների, արտաքին քաղաքականության միջավայրը

ենթակա է մի շարք խիստ սահմանափակումների, որտեղ գրեթե բացառվում են հեղափոխական տեղաշարժերն ու քաղաքակա-նության փոփոխությունները:

Material Forces vs. the Force of Ideas: What makes Russia Armenia's 'best friend'?

ARAM TERZYAN
Eurasian Research and Analysis Institute, USA
Brusov State University of Languages and Social Sciences, Armenia

The question of how states establish friendly relations provokes an inquiry into the interplay between social and material forces behind their behaviors. While constructivist driven received wisdom emphasizes the importance of social forces, realists would assign critical weight to material forces vs. the force of ideas. The case of Armenia is remarkable due to considerable gaps between its normative pursuits and strategic choices. While the European Union (EU) has been broadly framed as Armenia's civilizational choice and normative friend, it has tended to take a back seat to the strategic friend Russia. This study scrutinizes how the normative and strategic friends have been conceptualized in the foreign policy discourse of Armenia with a focus on the political and economic rationale behind Russia's treatment as indispensable friend. It concludes that the new Armenian government is largely bound to stick with the old discourse, shaped by a set of circumstances ranging from Armenia's troubled neighborhood to immense economic dependence on Russia. That said, in contrast to domestic political fluctuations, the landscape of foreign policy making is subject to a series of dire constraints that leave little to no room for revolutionary shifts and policy changes.